այդ դառնութիւն, այլ ընդհանուր տառապեալ Հայաստանեա[յ]ցս։ Վասն որոյ ցաւակցիմ ընդ սիրոյդ և կսկծամ ի սրտէ, զի որ ոչ մեծութիւն ձեր և ոչ նուաստս իւիք կերպիւ կարեմք մխիթարել կամ սփոփել զմեզ, ուրեմն պարտիմք Աստուծով միայն մխիթարիլ, որ մխիթարէ զմեզ յամենայն նեղութենէ մերմէ։ Վասն զի ով էր, որ ծնաւ, որ ոչ մեռաւ (բաց երկու կամ երեք սրբոց)։ Ուրեմն ասասցուք կամք տեառն եղիցի օրհնեալ, նա ետ՝ նա էառ։ Փառք և պատիւ նմա յաւիտեան։

Դարձեալ ցաւիմ, զի ոչ կարեմ սովաւ միայն բաւարարիլ, առանց պարսաւելոյ բախտին զխոշնդակութիւն, որ ոչ թոյլ տա մեզ զաշս մեր բանալ և հայել զերեսս մարդկան։ Բայց յիմանի, թէ յիրաւամբ է, զոր ինչ առնէ նա ընդ մեզ նայելով ի մեր համառեալ տմարդի, կանացի և փափկասուն վարուց, որ սակաւ բանիւ թուլանամք և սրտաբեկ լինիմք վասն լինելոյն մեր երկչոտք, ագահ և արծաթասէրք (ևս քան զմեզ աւելի ագահագոյն սեազգեստք), որ ըստ ողբոյն մեծին Մովսիսի Խորենացւոյն[28], աւել քան զյիսուն և եօթն տեսակ զանազան ախտիւք մոլեալ, զխառեաց պղերկք հեշտասէրք և այլն։ Իսկ մեք, որ յայսպիսի կացութեան յարատևեալք եմք, զի արդ է կարելի մեզ հաճոյ երևիլ առաջի Աստուծոյ կամ բախտին, որ միշտ տեսանեմք և ի յոլովիցս լսեմք, զի արի և վստահ արանց խնամէ նա զաջողութիւն, յաղթութիւն, ազատութիւն և ապա, անկասկած, տէրութիւն։ Որովհետև այս այսպէս է, զի Դի(ց)ուհին այն, որ առ վստահ և քաջաց խնամէ զաջողութիւն, ուրեմն տեղիք ոչ մեզ մեղադրել և դատապարտելոյ զնա։ Վասն այնորիկ պարտապան եմք, եթէ բանական իցեմք ամենայնի ի բաց թօթափել ի մէնջ զատելի (թ)շուառ տկարութիւնս մեր՝ համայնտեսել այնոցունց, որք ոչ խնայեն զանձինս իւրեանց առ ի տալ ազգի շարշարանաց կրել զվիշտս և հալածանս վասն հայրենեաց, կամ օգտի հասարակաց։ Բնաւին մոռանալով և ի միտ ոչ բերելով, թէ հարք մեր, որք անարիք գոլով մեռան և որդիք մեր կանուխ փոխեցան, եղբայրք մեր ոչ վասն հայրենեաց իւրեանց անկան ի պատերազմի, այլ մօլեալ սատակեցան անարժան յիշատակի։

Զայսոսիկ իսպառ ի մոռացումն տալով, ապայ թէ կարեմք այցելութեան ակն ունիլ ի նմանէ, որ մեռաւ վասն մեզ, և մեք ի դարձին պարտական եմք, զի մեռանիլ արիաբար վասն նորա։ Եթէ ոչ միայն կեամք, ըստ որում կեամք օրըստօրէ նուազիմք, որպէս նուազիմք։ Միշտ անարդ կշտամբեալ և արհամարհեալ ընդ ամենայն յերկրի և ընդ ամենայն տէրութեան ոչ աճեմք և ոչ բազմանամք յաղագս հրէյասարաս խստութեան զընդաբոյս մերումս բնութեանց։

Յետ այսր ամենայնի դէպ է ինձ ասելն. համանմանիմք գնդակի օլիմպիական խաղի, որ ի հնումն ժամանակի առ որ ոմն լախտիւ հարկանէ, ոմն ոտիւք աքացէ, իսկ ի վախճան խաղին, առեալ արկանեն ի խորշի միոջ իբրև անարդ և անպիտան իմն, մինչև ցնորոգումն կամ կրկնումն խաղին։ Որ նշանակէ դարձեալ գոգումն ահարկու և սատակիչ պատերազմին, որ ի մէջ երկուց կամ երից տէրութեանց։ Ըստ նախնեաց առակին. «Ի մարտիլին ձին և ջորին, էշն ի կոխան ոտից արարին»։

Այսպէս անցանին կեանք մեր ի վերայ երկրի։ Վա՜յ է մեզ, զորն ասեմ, զորն խոստովանիմ, և վա՜յ մեծ է ինձ՝ նուաստիս, որ այսօր ի գեղջս այս ոչ գտանի ոք, զի կարասցէ ընթեռնուլ զթուղթս և զիտացէ զսիրտս։ Ահա այս հարէ առակ խառն ընդ թուրքաց և հայ ռամկաց. «բիլանայ բիրդ էգինան, բիլմիանայ հակաց կա ասայ»[29]։

Ոչ գիտեմ առ ինչ վախճան դադարէր զկացութիւն Ղրիմու Հայոց, եթէ ազնուականութիւն ձեր ոչ էր գտեալ ներկայ ընդ Արդութեան երկրորդին Յովսէփայ վայելել զշնհորս և ողորմութիւն մեծի կայսերուհւոյն, գտնեայ իսպառ սպուռ կոխան ոտից լինէին նոքա։ Արդարև յիրաւի պարծիլ կարեմք առ ի զովելի ջանից ձերոց երկոցունց, և ևս արժանաւոր գովեստի մեծի, ՀԵՌՆԱՀԱՍ ու նպաստամատուց լինիլդ նմա երաշխաւոր վասն կարողացուցանիլոյ զնա առ ի հաստատել զտպարան և զդպրատուն։ Այն է միայն գործ ազնիւ, որ տայ և լուսաւոր առնէ զիսաւարեալ մառախլապատ միտս ազգիս։